# ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԸ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 27-Ի N 558-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Գլխավոր տեղեկություն**

| | |
|---|---|
| Համար | N 1438-Ն |
| Տիպ | Հրաման |
| Ակտի տիպ | Հիմնական ակտ (01.07.2026-01.01.2026) |
| Կարգավիճակ | Գործում է |
| Սկզբնաղբյուր | Միասնական կայք 2025.10.13-2025.10.26<br>Պաշտոնական հրապարակման օրը 21.10.2025 |
| Ընդունող մարմին | Պետական եկամուտների կոմիտեի նախագահ |
| Ընդունման ամսաթիվ | 15.10.2025 |
| Ստորագրող մարմին | Ժամանակավոր պաշտոնակատար |
| Ստորագրման ամսաթիվ | 15.10.2025 |
| Ուժի մեջ մտնելու ամսաթիվ | 01.07.2026 |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀ**

«15» հոկտեմբերի 2025թ. N 1438-Ն

# Հ Ր Ա Մ Ա Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 27-Ի N 558-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը՝

***Հրամայում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2019 թվականի օգոստոսի 27-ի «Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարությունների, անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ արտոնագրի և միկրոձեռնարկատիրության սուբյեկտի իրացման շրջանառության վերաբերյալ հաշվետվության ձևերը հաստատելու մասին» N 558-Ն հրամանի՝

1) վերնագրում, 1-ին կետի 4-րդ ենթակետում և N4 հավելվածի վերնագրում «շրջանառության» բառից հետո լրացնել «և դրոշմանիշային վճարի» բառերը,

2) N4 հավելվածում՝

ա. 2-րդ աղյուսակից առաջ լրացնել վերնագիր հետևյալ բովանդակությամբ.

«Բաժին 1. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտի իրացման շրջանառություն»,

բ. 2-րդ աղյուսակից հետո լրացնել նոր բաժին հետևյալ բովանդակությամբ.

«Բաժին 2. Դրոշմանիշային վճարի հաշվարկ

| | |
|---|---|
| 12. Դրոշմանիշային վճարի հաշվարկման բազա (տող 11) | |
| 13. Դրոշմանիշային վճար | |

Անհատ ձեռնարկատիրոջ կողմից ներկայացվող հաշվետվության մեջ 2-րդ բաժնի 12-րդ և 13-րդ տողերն ինքնաշխատ եղանակով լրացվում են այն դեպքում, երբ անհատ ձեռնարկատերը հաշվետու տարվա ընթացքում համարվել է բացառապես միկրոձեռնարկատիրության սուբյեկտ։»

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից և տարածվում է 2026 թվականի հունվարի 1-ից հետո ընկած հաշվետու ժամանակաշրջանների վրա։

**ժամանակավոր**
**պաշտոնակատար՝** **Կ. Թամազյան**

**Պաշտոնական հրապարակման օրը՝ 21 հոկտեմբերի 2025 թվական:**